ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1959 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ «ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ X—XIII ԴԱՐԵՐՈՒՄ»

Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտը հրատարակել է պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Բաբկեն Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում X—XIII դարերում» աշխատության առաջին մասը, որն իրենից ներկայացնում է երկարատև, օղտակար աշխատանքի պտուղ և գիտական լուրջ հետազոտություն։ Հեղինակը նշում է, որ ներկա մենագրության մեջ չեն ընդգրկված միջնադարյան Հայաստանի քաղաքների պատմության բոլոր կողմերը, որ նրանց մի մասը լուսաբանվելու է աշխատության երկրորդ մասում (էջ 353)։

Ներկա մենագրությունը բաղկացած է երկու խոշոր բաժիններից. այն է՝ քաղաքների առաջացումն ու զարգացումը Հայաստանում IX—XI դարերում և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում։ Հիշյալ երկու բաժիններին նախորդում է ընդարձակ ներածություն, որտեղ հեղինակը քննական վերլուծության է ենթարկում քաղաքների և քաղաքային կյանքի մասին եղած աղբյուրները և գնահատում հիշյալ աղբյուրներն ըստ արժանվույն։ Քաղաքների մասին հեղինակի գնահատության չափանիշը մարքսիստական տեսությունն է։ Չբավարարվելով միայն այն աղբյուրների տեսությամբ, որոնք անմիջականորեն վերաբերում են քննարկվող նյութին, հեղինակը ամենայն բարեխղճությամբ տեսական քննության է ենթարկում նաև այն աղբյուրները, որոնք ավելի կամ պակաս չափով առնչվում են իր թեմայի հետ, տալով յուրաքանչյուրի հակիրճ բնութագրությունը։ Այս ներածականը երկակի նշանակություն ունի։ Մի կողմից՝ ընթերցողը ծանոթանում է քաղաքների վերաբերյալ հեղինակի պատմագիտական հիմնական ելակետային դրույթների հետ, իսկ մյուս կողմից՝ հիշյալ ներածականը աղբյուրագիտական մի արժեքավոր ուղեցույց է ծանոթանալու ոչ միայն միջնադարյան Հայաստանի քաղաքների վերաբերյալ, այլև հին և միջնադարյան Հայաստանի պատմության շատ ու շատ կողմերի վերաբերյալ եղած աղբյուրների հետ։ Այդ մենք համարում ենք ներկա աշխատության առաջին (ոչ թե ըստ նշանակության, այլ ըստ հերթականության) ու կարևոր արժանիքներից մեկը։

Գրքի առաջին բաժինը շարադրված է հետևյալ հաջորդականությամբ։ Առաջին գլխում քննության են ենթարկված ֆեոդալական քաղաքի կազմավորումը Հայաստանում և Հայաստանի քաղաքները IX—XI դարերում։ Այստեղ հեղինակը հանգամանորեն քննության է առնում ֆեոդալական քաղաքի առաջացման հարցն ընդհանրապես։ Ընկ. Բ. Առաքելյանը շատ լայն պլանով քննում է ֆեոդալական քաղաքների առաջացման վերաբերյալ զանազան տեսակետներն ու տեսությունները, ինչպես, օրինակ, այսպես կոչված մարկի կամ համայնքի տեսությունը, շուկայական տեսությունը, քաղաքը որպես տարանցիկ առևտրի հետևանք ընդունողների տեսակետը և մի շարք այլ անհիշտ տեսություններ, որոնք բոլորն էլ իրավացիորեն մերժվում են հեղինակի կողմից։ Հենվելով ֆեոդալական քաղաքների առաջացման մասին մարքսիզմի կլասիկների ասույթների վրա, ընկ. Բ. Առաքելյանն անցնում է Հայաստանի քաղաքների առաջացման սոցիալ-տնտեսական պայմանների քննությանը։ Հեղինակը նախ համառոտ ակնարկ է տալիս Հայաստանի հնագույն քաղաքների և նրանց անկման պատճառների մասին (էջ 32—37), ապա անցնում միջնադարյան քաղաքների առաջացման բուն պատճառների վերլուծությանը։

Հայտնի է, որ IX—XIII դարերը Հայաստանի տնտեսական ու քաղաքական զարգացման պատմության մեջ բնութագրվում են որպես զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջան։ Զարգացած ֆեոդալիզմի բնորոշ գծերից մեկը Հայաստանում այն էր, որ այս շրջանում տեղի ունեցավ հողային սեփականության ձևերի էվոլյուցիա ու այդ հիման վրա ձևավորվեց խոշոր ֆեոդալական, ինչպես նաև եկեղեցական-կալվածատիրական տնտեսությունը, որի զարգացումն առաջացրեց տնտեսական կյանքի հոժկու վերելք իր հետևանքներով հանդերձ։ Այդ տնտեսական զարգացման ամենամերձավոր հետևանքներից մեկն էլ հանդիսացավ ֆեոդալական քաղաքների առաջացումն ու զարգացումը։ Քաղաքների առաջանալն ու զարգանալը համարելով աշխատանքի հա-

սարակական բաժանման, երկրի ներքին զարգացման արգասիք, ընկ. Առաքելյանը հատուկ քննության է ենթարկում Հայաստանի տնտեսական զարգացումը և երկրի անկախության վերականգնումը IX դարում, մատնացույց անելով այն վճռական պարագաները, որոնցով էլ հենց պայմանավորված էր երկրի զարգացման նոր աստիճանը։ Հեղինակը ցույց է տալիս զարգացած ֆեոդալիզմին անցնելու հետևյալ հիմնական գործոնները. ա) ժառանգական խոշոր հողատիրության ամրապնդվելը և ֆեոդալական խոշոր կալվածքային տնտեսությունների զարգանալը, բ) գյուղացիների ճորտացման պրոցեսը և այդ պրոցեսի հետզհետե խորանալը, գ) աշխատանքի բաժանման հիման վրա արհեստների առանձնանալը երկրագործությունից, առևտրի զարգացումը և այդ ամենի հիման վրա ֆեոդալական քաղաքի ձևավորումը (էջ 38)։

Չի կարելի չնշել, որ անցյալի պատմական ուսումնասիրություններում քաղաքների առաջացման բուն պատճառները կամ բոլորովին հաշվի չեն առնվել կամ թե մղվել են հետին պլանի վրա, և վճռական նշանակություն տրվել է արտաքին գործոններին ու Հայաստանի աշխարհագրական դիրքին։ Այսպես, ակադեմիկոս Մանանդյանը քաղաքների զարգացման գլխավոր և կարելի է ասել միակ պատճառը համարում էր Հայաստանի արտաքին բաղաքական վիճակը և դրանով պայմանավորված տրանզիտային առևտրի զարգանալը։ «Բագրատունիների հովանավորության տակ զարգացող մեծ առևտրի վերակենդանացմանը պետք է վերագրել, անշուշտ, թե Հայաստանի տնտեսական բարգավաճ վիճակը և թե հոյակապ քաղաքների հիմնումն ու նրանց բուռն ու արագ աճումն այս ժամանակաշրջանում»[1]։ Հայաստանի տնտեսական վերածնման, նրա քաղաքային կյանքի ծաղկման վերաբերյալ այսպիսի պատճառաբանությունը, անշուշտ, միակողմանի է ու թերի։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, առաջին պլանի վրա են բաշված արտաքին կարգի գործոնները և չի խոսվում ներքին տնտեսական գործոնների մասին, որոնք ոչ թե երկրորդական, այլ վճռական դեր են խաղացել քաղաքների առաջացման ու զարգացման գործում։ Անվիճելի է, որ Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ տրանզիտային գլխավոր ճանապարհի վրա, ինչպես և ստեղծված արտաքին քաղաքական սիտուացիան որոշ նպաստավոր դեր խաղացել են Հայաստանի քաղաքների զարգացման գործում։ Սակայն այդ բացատրությունը պատասխան չի տալիս այն հարցերին, թե ինչպես առաջացավ քաղաքային բնակչությունն իրեն հատուկ գրաղմունքով, կապված էր արդյոք այդ պրոցեսը գյուղի արտադրողական ուժերի զարգացման հետ, քաղաքների առաջացմամբ ու զարգացմամբ ի՞նչ ներքին հակասություններ էին ծագում ու լուծվում և այլ բազմաթիվ հարցեր։

Կարճ ասած, Հայաստանի միջնադարյան քաղաքների զարգացման մասին առաջ քաշված հիշյալ տեսությունը աշքաթող է անում ֆեոդալական հասարակարգի սոցիալ-տնտեսական հակասությունները, որոնց հիման վրա էլ առաջացել ու զարգացել են քաղաքները։

Ֆեոդալական տնտեսության զարգացումը և այդ հիմքի վրա գյուղացիության մի մասի ճորտացումն ու շահագործման ուժեղացումը, որ մասնավորապես ծավալվեց X դարից սկսած, խոշոր կալվածատիրական և վանքապատկան տնտեսություններում առաջ բերեց հավելյալ արդյունքի մասսայական արտադրություն։ Ֆեոդալական ունեցվածքի երեք ձևերի միաժամանակյա տակայությունը հնարավորություն էր տալիս թագավորական իշխանություններին, ֆեոդալներին և բարձր հոգևորականությանը հասարակական հարստության նշանակալի մասն օգտագործել բերդերի, պալատների, վանքերի շինարարության համար։ Գյուղացիների ստեղծած հավելյալ արդյունքը նյութական հիմք էր ստեղծում կուլտուրայի բազմազան ձևերով դրսևորվելու համար, այդ թվում նաև քաղաքային կուլտուրայի դրսևորման համար։ Ֆեոդալիզմի արտադրողական ուժերի զարգացումը նշանակում էր ոչ միայն գյուղատնտեսական արտադրության զարգացում, այլև աշխատանքի հասարակական բաժանման խորացում, որը հետզհետե արհեստն անջատում էր երկրագործությունից և կենտրոնացնում հին քաղաքատեղերում, ամրոցներում, վարչական կենտրոններում, որոնք և վեր էին ածվում ավանների, ապա և քաղաքների։ Այդ պրոցեսին շատ չափով խթանում էր այն, որ եթե ճորտացումից փախչող գյուղացին և արհեստավորը ապաստանում էին քաղաքներում, նրանք ազատագրվում էին ճորտագրումից, ուստի այդ հիման վրա էլ, տեղի էր ունենում գյուղացիների և արհեստավորների հոսանք գյուղից դեպի քաղաքները և քաղաքի վերածվող ավանները, որտեղ այդ տարրերը տնտեսական գործունեություն էին ծավալում։ Քաղաքների առաջացմանն ու զարգացմանը խթանում էր նաև ագրարակային տնտեսության զարգացման հիման վրա այնտեղ կատարվող աշխատանքի բաժանումը։

Ի տարբերություն քաղաքների առաջացման ու զարգացման վերաբերյալ անցյալի ոչ ճիշտ

[1] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները X—XI դարերում, էջ 11։

տեսակետների, ընկ. Առաբելյանը՝ քաղաքների առաջացումն ու զարգացումը համարելով երկրի ներքին կյանքի զարգացման արդյունք, իհարկե, չթերագնահատելով նաև արտաքին քաղաքական ու տնտեսական պայմանների նշանակությունը, գիտականորեն արժեքավորում է Հայաստանի քաղաքների առաջացումն ու զարգացումը IX—XI դարերում (տե՛ս էջ 58—70)։ Ավարտելով Հայաստանի միջնադարյան քաղաքների առաջացման ու զարգացման հարցերի քննությունը, ընկ. Առաբելյանն իր աշխատության երկրորդ գլխում մանրամասնորեն քննության է ենթարկում քաղաքների տեղադրաշխվածությունը Հայաստանի տերիտորիայի տարբեր մասերում՝ քաղաքները և գյուղաքաղաքները Բագրատունյաց թագավորության մեջ, Սյունիքում, Վասպուրականում, Տարոնում և Ծոփքում, Հայաստանի արևմտյան մարզերում և այլն։ Անհրաժեշտ է մատնանշել, որ հեղինակը տալիս է յուրաքանչյուր քաղաքի և գյուղաքաղաքի մանրամասն նկարագիրը (էջ 71—118)։ Թե ինչպես են ծագել ու զարգացել Հայաստանի քաղաքները, այդ մասին մենք ունեցել ենք ինչպես հայ, նույնպես և օտար պատմիչների ու աշխարհագրիների վկայությունները, որոնք բերված են ակադեմիկոս Մանանդյանի աշխատություններում։ Մանանդյանի բերած տվյալները, սակայն, սպառիչ չեն, իսկ քաղաքների քանակի վերաբերյալ տվյալները հաճախ չափազանցված։ Շատ կարևոր է քաղաքների բնակչության ընդհանուր հարցը, որի նկատմամբ անցյալի հեղինակները բավարարվել են միայն առանձին նշումներով։ Այս տեսակետից էլ ընկեր Առաբելյանի աշխատությունը նոր խոսք է ասում։ Առաբելյանի մենագրության մեջ ո՛չ միայն շարադրված է IX—XI դարերում Հայաստանի քաղաքների առաջացման ու զարգացման գիտական մեկնությունը, այլև փաստական հարուստ նյութերի վերլուծության հիման վրա, ճշտված է քաղաքների թիվը, յուրաքանչյուր քաղաքի և գյուղաքաղաքի առաջացման ժամանակաշրջանը, ինչպես նաև դրանց դասակարգումը, ըստ նրանց խաղացած դերի երկրի կյանքում։ Հետևելով քաղաքների և գյուղաքաղաքների առաջացման պատմական ընթացքին, ընկեր Առաբելյանը կազմել է մի հատուկ աղյուսակ, որտեղ ցույց է տրված, թե սկսած IX դարից ինչ քաղաքներ են առաջացել (տե՛ս էջ 124)։

Հայաստանի քաղաքներն ըստ նրանց տնտեսական նշանակության և խոշորության պրոֆ. Առաբելյանը բաժանել է չորս խմբի։ Առաջին խմբին են դասված Անին, Դվինը, Կարսը, Արծնը, Կարնոն քաղաքը, Երզնկան, Արճեշը, Վանը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը, Նիրկիրտը։ Ըստ բնակչության թվի իրենց մեծությամբ առանձնանում են Անին և Դվինը, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է 70—100 հազար բնակչություն, Արծնի բնակչության քանակը, ըստ այն տվյալների, որ ընկեր Առաբելյանը համարում է չափազանցված, կազմել է մինչև 150 հազար։ Ըստ պրոֆ. Առաբելյանի բերած տվյալների, մեծ քաղաքների բնակչության ընդհանուր թիվը կազմել է մոտավորապես 400 հազար մարդ։ Միջին մեծության քաղաքների բնակչության թիվը կազմել է ավելի քան 100 հազար մարդ։ Ի մի ամփոփելով քաղաքների և գյուղաքաղաքների բնակչության վերաբերյալ տվյալները, կստանանք առնվազն 560 հազար մարդ։

Գրքի երկրորդ բաժինը նվիրված է արհեստների զարգացմանը։ Աշխատանքի հասարակական բաժանման հիման վրա արհեստի անջատվելը երկրագործությունից և նրա կենտրոնանալը քաղաքներում ֆեոդալական քաղաքին տալիս էր դասակարգային բարդ կառուցվածք։ Քաղաքների էկոնոմիկային դեմ տվող առաջին և գլխավոր գործոնը դառնում էր արհեստը, իսկ գյուղատնտեսությունը քաղաքներում ծառայում էր որպես օժանդակ ճյուղ և մատնացույց անում քաղաքային կյանքի կարգացման հետագա հնարավորությունները։ Չնայած այս իրողությանը, Հայաստանի քաղաքներին վերաբերող անցյալի ուսումնասիրություններում անվերապահորեն հավաստվում էր այն ոչ ճիշտ տեսակետը, թե քաղաքների հարստության գլխավոր աղբյուրը միջազգային տարանցիկ առևտուրն էր, իսկ արհեստների դերը քաղաքային կյանքում դիտվում էր որպես մի օժանդակ կողմ։ Արհեստների մանրակրկիտ վերլուծությունը, որ կատարված է գրախոսվող աշխատության մեջ, ավելորդ անգամ հերքում է արհեստի խաղացած դերի մասին սխալ պատկերացումները։ Արհեստների, որպես քաղաքային կյանքի մեջ վճռական նշանակություն ունեցող կողմի անտեսումը, մասնավորապես բացահայտ է ակադեմիկոս Մանանդյանի քաղաքներին նվիրված մենագրություններում[2]։ Հայաստանի քաղաքներին նվիրված աշխատությունների շարքում պետք է նշվի ընկ. Վ. Աբրահամյանի «Արհեստները Հայաստանում» մեծածավալ և հետաքրքիր աշխատությունը, որտեղ քննված է Հայաստանի արհեստների զարգացումը IV—XIII դարերում[3]։ Ընկ. Աբրահամյանի այս օգտակար աշխատանքն իր արժանիքներով հան-

[2] Տե՛ս Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները X—XI դարերում, էջ 26։

[3] Տե՛ս Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV—XIII դարերում, Երևան, 1956։

դերն, դժբախտաբար իր վրա կրում է փոխանակային կոնցեպցիայի ազդեցությունը։ Խոսելով Հայաստանի տնտեսական-բաղարական կյանքի զարգացման մասին IX—XI դարերում, ընկ. Աբրահամյանը արհեստների զարգացման, ինչպես և ներքին շուկայի առաջացման ու զարգացման պատճառը համարում է արտաքին առևտուրը։ Ընկ. Աբրահամյանը գրում է. «Հայ մատենագրական աղբյուրները ցույց են տալիս, որ այս շրջանում Հայաստանի հյուսիսային մասում գտնվող վերոհիշյալ բաղարները՝ ներգրավվելով արտաքին առևտրի մեջ, կարողանում են ստեղծել իրենց համար միաժամանակ փոխանակության ներքին շուկա, որի հիման վրա կենտրոնական բաղարներում արագ թափով զարգանում են թե՛ առևտուրը և թե՛ արհեստները»[4]։ Այսպիսով, ըստ ընկ. Աբրահամյանի, արտաքին առևտուրն ստեղծում է ներքին շուկա, իսկ ներքին շուկան, իր հերթին, զարգացնում է առևտուրը և արհեստը։ Ամենից առաջ ներքին շուկան, որպես տնտեսական կատեգորիա, ուղղակի հետևանք է ապրանքային տնտեսության զարգացման և ստեղծվում է նրանով, իսկ ներքին շուկայի խորացումը որոշվում է աշխատանքի հասարակական բաժանման աստիճանով։ Ուրեմն, ո՛չ թե առևտուրն ու արտաքին շուկան են ստեղծում արհեստ, այլ ճիշտ հակառակը՝ արտադրությունն է կյանքի կոչում առևտուրը։ Հետևաբար ոչ ճիշտ պետք է համարել նաև ընկ. Աբրահամյանի այն պնդումը, որ իբրև թե արտաքին առևտուրն է իրոք նպաստել Հայաստանում արհեստների ձյուղավորմանն ու զարգացմանը[5]։

Արհեստը՝ ահա զարգացած ֆեոդալիզմի շրջանի բաղարների էկոնոմիկայի գլխավոր ճյուղը, որն արտադրության միջոցներ է արտադրում իր համար, գործիքներ գյուղատնտեսական աշխատանքների որոշ տեսակների համար, որոշ չափով վերամշակման է ենթարկում գյուղատնտեսական հումքը, որի զգալի մասը առևտրի և փոխանակության միջոցով իրացվում է ըստ տնտեսական նշանակության։ Ի տարբերություն ընկեր Աբրահամյանի, պրոֆ. Առաքելյանը ցույց է տալիս, որ արհեստների զարգացումը հետևանք է աշխատանքի հասարակական բաժանման և տալիս է արհեստների առանձին տեսակների մանրամասն բնութագրությունը։ Եթե մենք ցանկանանք գրախոսվող աշխատության մեջ քննարկված բոլոր արհեստները խմբավորել ըստ նրանց թողարկած արտադրանքի տնտեսական նշանակության, մենք կունենանք արհեստների հետևյալ խմբերը.

1. Արհեստներ, որոնց թողարկած արտադրանքը ծառայել է արհեստի տարբեր տեսակների համար որպես արտադրության միջոցներ, ինչպես նաև գյուղատնտեսության համար որպես արտադրագործիքներ։ 2. Արհեստներ, որոնց թողարկած արտադրանքը ծառայել է որպես սպառման առարկաներ, անկախ այն բանից, թե դրանք օգտագործվել են երկրի ներսում, թե արտահանվել են երկրից դուրս։ 3. Արհեստներ, որոնց արտադրանքը ծառայել է որպես պերճանքի առարկաներ ֆեոդալների, հոգևորականների և պալատական իշխանավորների պահանջները բավարարելու, ինչպես նաև այնպիսի արհեստներ, որոնք ծառայել են զանազան պալատների, վանքերի, բերդերի շքեղությունը ձևավորելու համար։

Արհեստների առաջին խմբին են վերաբերում մետաղի և փայտի մշակման հետ կապված արհեստները, այն է՝ դարբնությունը, պայտարությունը, հյուսնությունը և այլն։ Արհեստների այս խմբի վերաբերյալ գրքում օգտագործված են հարուստ նյութեր՝ հայտնաբերված մասնավորապես Դվինի և Անիի պեղումներից։ Ընկ. Առաքելյանը ցույց է տալիս, որ պրոֆեսիոնալ հանքագործները, որոնք հին Հայաստանում կոչվում էին հանքագործ, կամ հանքահատ, հանքարարը հանելուց բացի, ամենապրիմիտիվ եղանակով անցատում էին մետաղը, որը հետո անցնում էր դարբինների արհեստանոցը՝ վերամշակելու և նրանից զանազան գործիքներ ու հարմարանքներ պատրաստելու համար։ Երկաթը նախ ենթարկում էին հալման, ապա կռման։ Հալելու համար, որպես հիմնական միջոց ծառայում էր դարբնի հնոցը, որտեղ լցվում էր բովախառնուրդը՝ փայտը կամ ածուխը և երկաթը։ Հնոցում լցված բովախառնուրդը շիկացնելու նպատակով օգտագործվում էր փուչը, որի միջոցով անընդհատ օդ էր մղվում դեպի հնոցի ներսը։ Հնոցում շիկացած երկաթը դուրս էր բերվում հատուկ ունելիների օգնությամբ և դրվում սալի վրա, ուր և կռման էր ենթարկվում։ Կռման հիմնական գործիքը կռանն էր կամ մուրճը։ Պրոֆ. Առաքելյանը նշում է, որ կռելուց բացի, հարկ էր լինում կատարել նաև զոդում։ «Շատ խոշոր նշանակություն ուներ զոդը կամ զոդելը, այսինքն երկու կտոր երկաթ կամ երկաթն ու պողպատն իրար կպցնելը։ Զոդված են եղել Գառնիում գտնված մի եռաժանի և Դվինի միջնաբերդում գտնված բահը, իսկ նույն տեղում գտնված երկաթե խողովակի երկայնությամբ նկատ-

[4] Նույն տեղում, էջ 18—19։
[5] Նույն տեղում, էջ 19։

վում է զոդման համար օգտագործված պղնձի կարը» (էջ 135)։ Առանց զոդման տեխնիկայի հնարավոր չէր լինի պատրաստել դիմացկուն խոփեր, բահեր, գերանդիներ, սայլի դոդեր, իրենց հենց դարբնի շատ ու շատ գործիքներ։ Հենվելով հնագիտական նյութերի վրա, պրոֆ. Առաքելյանը նշում է, որ զոդման տեխնիկայի զարգացման ասպարեզում Հայաստանը կանխել է Արևմտյան Եվրոպային, որտեղ երկաթե խողովակներ ավելի ուշ են պատրաստվել։ Դարբնության արհեստի զարգացումը զուգորդվում էր այդ արհեստը հետզհետե բաղկացուցիչ մասերի տրոհվելու հետ, նրանից անջատվում էին արհեստավորների հատուկ խմբեր, որոնք զբաղվում էին միայն փականագործությամբ, ուրիշները պայտարությամբ, զինագործությամբ և այլն։ Առաջին խմբին պատկանող արհեստներից միջնադարյան Հայաստանում լայն տարածում են ունեցել նաև հյուսնությունը և ատաղձագործությունը, առանց որոնց զարգացման հնարավոր չէր ունենալ այնպիսի մասսայական նշանակություն ունեցող գյուղատնտեսական գործիքներ, ինչպիսիք էին արորը, փայտե գութանը, փոցխը, եղանը, սայլը, ջուլհակության համար՝ իլիկը, հասարակ ճախարակը, գործելու պրիմիտիվ հաստոցը և այլն։

Սպառման առարկաներ արտադրող արհեստի ճյուղերից պետք է նշվի նախ և առաջ ջուլհակությունը, որը տարածված է եղել ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում։ Խարսխված լինելով գյուղատնտեսական հումքի վրա, այդ հումքի արդյունաբերական մշակումը, բացի քաղաքից, կատարվում էր նաև գյուղում։ Այստեղ այդ վերամշակումը չէր անջատվում գյուղատնտեսությունից և չէր դառնում առանձին արհեստագործություն։ Ֆեոդալական-կալվածատիրական խոշոր տնտեսությունը անձնական սպառման համար արտադրում էր այն ամենը, ինչ հնարավոր է վերամշակել կալվածքում։ Հողագործության, անասնապահության, որսի և այլ պրոդուկտները, որոնք ստացվում էին ֆեոդալի տնտեսությունից, ինչպես և այն, որ ֆեոդալներն ստանում էին գյուղացիներից, նախ՝ գնում էին սպառման համար։ Դրա նշանակալի և թերևս արժեքավոր մասը գնում էր վաճառքի և հետևապես չէր անցնում վերամշակման բովից, սակայն որոշ մասն էլ վերամշակվում էր հենց ֆեոդալական կալվածքում, ուստի և այնտեղ աշխատողների միջից դուրս էին գալիս հատուկ արհեստավորներ՝ ջուլհակներ, կարողներ, հացթուխներ և այլն։ Սպառման և տնտեսական կարիքների համար բամբակի և բրդի մշակումը, կտավի և հասարակ մահուդի պատրաստումը նշանակալի չափով տարածված էր գյուղերում։ Ջուլհակությունը որքան էլ հանդիսանար գյուղացիների օժանդակ զբաղմունքը, նա քաղաքում կազմել է հատուկ արհեստ, որի արտադրանքը սպառվել է քաղաքային բնակչության բոլոր շերտերի կողմից, ինչպես և երկրից դուրս է արտահանվել։ Հիշյալ բոլոր տեսակի արհեստները շատ մանրամասնորեն քննարկված են գրախոսվող գրքի երկրորդ բաժնում։

Գրքի վերջին գլխում քննության է առնված արհեստագործության անջատման պրոցեսը հողագործությունից, արհեստների որոշ տեսակների տարածվածության աստիճանը գյուղում։ Հեղինակը ճշտորեն նշում է, որ արհեստները գյուղում համեմատած քաղաքի հետ, սահմանափակ տարածում ունեին, որ գյուղի արհեստավորների աշխատանքը ցածր արտադրողականություն ուներ։ Վերջում շատ համառոտ կերպով նշվում է ընդհանուր կամ մայր արհեստների տրոհվելը բաղկացուցիչ մասերի, որպես աշխատանքի բաժանման հետագա խորացման արդասիք։

Սկզբունքային առարկություններ չունենալով գրքում քննարկված հիմնական հարցերի դեմ, ուզում ենք նշել մեթոդական կարգի որոշ թերություններ։ Մենք կարծում ենք, որ գրքի առաջին գլուխը (բացի առաջին ենթագլխից) նկատելի չափով ձգձված է։ Մասնավորապես ձգձված է այդ գլխի չորրորդ ենթագլուխը, որտեղ հեղինակը ընթերցողին նախապատրաստում է Հայաստանի քաղաքների առաջացումը ճշտորեն ըմբռնելու համար։ Քննության առնելով գյուղատնտեսական կուլտուրաների տարածվածության հարցը Հայաստանում, ընկեր Առաքելյանը ոչ միշտ է, որ պատմական սահմանագծերը պահպանում է։ Բավականաչափ ձգձված են շարադրված նաև արհեստի տարբեր տեսակները։ Այստեղ հեղինակը շատ է տարվել արհեստների առանձին տեսակների տեխնիկայի մանրամասներով, արտադրանքը պատրաստելու պրիոմների հարցերը պարզաբանելով և այլն։ Այս մասնակի բնույթ կրող թերությունները, սակայն, ոչ մի չափով չեն իջեցնում գրքի բացահայտ արժանիքները և ոչ էլ վնասում են նրա բովանդակությանը։ Գիրքն իր կառուցվածքով, հարցերի դրման, լուծման եղանակով, իր խորությամբ ու մեթոդոլոգիայով և գիտական մակարդակով կարևոր ներդրում է հայ ժողովրդի պատմության և մասնավորապես միջնադարյան Հայաստանի քաղաքային կյանքի պատմության ուսումնասիրության ասպարեզում։ Ընթերցողը չի կարող չնկատել նաև գրքի խմբագիր՝ Լ. Խաչիկյանի կատարած շնորհալի աշխատանքը։

Հ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ